Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի Մարզ
Գրիբոյեդովի Գյուղապետարան

Республика Армения
Армавирский Марз
Муниципалитет Села
Грибоедова

N 153
06 12 2013թ

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Գրիբոյեդով համայնքի ղեկավարի 2013 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 46 թերթ:

Գրիբոյեդով
համայնքի ղեկավար Վ. Գրիգորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 11738-13
06 12 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 1 » նոյեմբերի 2013թ N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի N1180-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2013թվականի հուլիսի 2-ի N285 որոշման 4-րդ կետը, արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ նախապես բնակչության, նյութական և մշակույթային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և անցկացման ապահովման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ստեղծել Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի 1-ի::
2.Գրիբոյեդով համայնքի տարահանման հանձնաժողովի կազմում ստեղծել աշխատանքային խմբեր՝ համաձայն հավելված 2-ի:
3.Հաստատել տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելած 3-ի:
4. Ստեղծել տարահանման հավաքակայան Գրիբոյեդովի միջնակարգ դպրոցի շենքում՝ հասցեն Նար-Դոսի փողոց թիվ 1/1:
5. Տարահանման հավաքակայանի պետ նշանակել դպրոցի տնօրեն Սերգեյ Թադևոսյանին:
6. Տարահանման հավաքակայանի պետ Ս. Թադևոսյանին՝
- որոշել տարահանման հավաքակայանի կառուցվածքը և կազմը, մշակել ՏՀԿ /ԸՀԿ/ կառուցվածքային մարմինների գործառնական պարտականությունները և ներկայացնել հաստատման տասնօրյա ժամկետում:
7. Առաջարկել համայնքի տարածքում գործող կազմակերպությունների ղեկավարներին՝ ստեղծել օբյեկտային տարահանման հանձնաժողովներ:
8.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2011թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղական համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» N9-Ա որոշումը:
9.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահ Սարգիս Գևորգյանին:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի նոյեմբերի
գ. Գրիբոյեդով

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավարի
2013թվականի նոյեմբերի 1-ի N19 որոշման

ԿԱԶՄ
Գրիբոյեդով համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Գևորգյան	համայնքի ղեկավարի տեղակալ
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Աշոտ Արզումանյան	համայնքի միջնակարգ դպրոցի զինղեկ
Հանձնաժողովի քարտուղար՝ Սուրեն Գրիգորյան	գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Հանձնաժողովի անդամներ, աշխատանքային խմբերի ղեկավարներ՝

Դավիթ Շուշանյան	գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
Մեխակ Դանիելյան	գյուղապետարանի վարորդ
Դավիթ Դավթյան	գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
Հերմինե Պետրոսյան	<<Գրիբոյեդովի Բուժ. Ամբուլատորիա>> ՊՓԲԸ տնօրեն

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավարի
2013թվականի նոյեմբերի 1-ի N19 որոշման

Գրիբոյեդով համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբեր

1.Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Դավիթ Շուշանյան գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Խմբի անդամներ՝

Էմին Զաքարյան համայնքի բնակիչ

Վոլոդյա Գրիգորյան համայնքի բնակիչ

2.Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Մեխակ Դանիելյան գյուղապետարանի վարորդ

Խմբի անդամներ՝

Գագիկ Թեմուրյան համայնքի ավագանու անդամ

Ասլան Ասլանյան համայնքի բնակիչ

3.Տրանսպորտային ապահովման խումբ.

Խմբի ղեկավար՝

Դավիթ Դավթյան գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Խմբի անդամներ՝

Արման Ասլանյան համայնքի բնակիչ

Վոլոդյա Կարապետյան համայնքի բնակիչ

4.Սենդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Հերմինե Պետրոսյան	<<Գրիբոյեդովի Բուժ. Ամբուլատորիա>> ՊՓԲԸ տնօրեն

Խմբի անդամներ՝

Արմինե Բաղրամյան	<<Գրիբոյեդովի Բուժ. Ամբուլատորիա>> ՊՓԲԸ բուժքույր
Նատալյա Առուստամյան	<<Գրիբոյեդովի Բուժ. Ամբուլատորիա>> ՊՓԲԸ բուժքույր

Հավելված 3

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավարի 2013թվականի նոյեմբերի 1-ի N19 որոշման

Կանոնադրություն

Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի տարահանման հանձնաժողովի

I.Ընդհանուր դրույթներ

1. Տարահանման հանձնաժողովի մասին Կանոնադրությունը սահմանում է տարահանման հանձաժողովի ստեղծման կարգը, կազմը և հիմնական խնդիրները խաղաղ պայմաններում, ԱԻ ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ:

2. Համայնքի տարահանման հանձնաժողովը ստեղծվում է համայնքապետի որոշմամբ, որպես մշտական գործող տարահանման մարմին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ տարածքներ տարահանման միջոցառումների նախօրոք պլանավորման, տարահանման մարմինների ստեղծման ու նախապատրաստման և տարահանման միջոցառումների անցկացման ու բազմակողմանի ապահովման նպատակով:

3. Տարահանման հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է համայնքապետը: Տարահանման հանձնաժողովի անմիջական ղեկավարումը դրվում է տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

4. Տարահանման հանձնաժողովն աշխատում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նրա գործունեության կազմակերպա-մեթոդական ապահովումը:

5. Տարահանման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով, այլ նորմատիվ-իրավական փաստաթղթերով և սույն Կանոնադրությամբ:

II. Տարահանման հանձնաժողովի հիմնական խնդիրները

6. Խաղաղ ժամանակ՝

1) ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ-ի հետ համատեղ ռազմական դրության ժամանակ և ԱԻ ծագման ու սպառնալիքի դեպքում բնակչության տարահանման պլանի մշակում և տարին մեկ անգամ ճշգրտում

2) տարահանման մարմինների ստեղծման, համալրման և նախապատրաստման վերահսկողություն

3) անվտանգ գոտում տարահանվող բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման վայրերի ընտրում

4) տարահանման պլանների, ինչպես նաև տարահանվող բնակչության անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման, առաջնահերթ կենսաապահովման պլանների մշակման ընթացքի վերահսկողություն

5) մասնակցություն տարահանման մարմինների տարահանման միջոցառումների անցկացման պատրաստականության ստուգմանը: Նիստերի պարբերաբար անցկացում ստուգման արդյունքների վերլուծման համար

6) զինվորական հրամանատարության հետ փոխհամագործակցության կազմակերպումը՝ տարահանման միջոցառումների պլանավորման, ապահովման և անցկացման հարցերով

7) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսումնավարժություններին՝ մշակված տարահանման փաստաթղթերի իրականության ստուգման և տարահանման միջոցառումների կազմակերպման և անցկացման հարցերով գործնական հմտությունների ձեռքբերման նպատակով

8) բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման նախապատրաստման վերահսկողություն, տարահանման փաստաթղթերի մշակում և հաշվառում:

7. ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրելու դեպքում՝

1) կառավարման, կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության բերման, ինչպես նաև տարահանման մարմինների ծավալման վերահսկողություն

2) տարահանվող բնակչության թվաքանակի և կարգի ճշգրտում, տարահանման պլանների, տարահանման բոլոր տեսակների ապահովման իրականացման և կարգի ճշգրտում

3) բժշկական հաստատությունների, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտի դուրս բերման նախապատրաստման վերահսկողություն

4) վտանգավոր գոտուց, ինչպես նաև տարահանման միջանկյալ կետերից բնակչության դուրս բերման և անվտանգ վայրերում տեղաբաշխման համար հատկացված տրանսպորտային միջոցների նախապատրաստման վերահսկողություն

5) առկա պաշտպանական կառույցների պատրաստականության բերման վերահսկողություն

6) տարահանման հանձնաժողովի հետ անվտանգ գոտում ընդունման, տեղաբաշխման և բնակչության առաջնահերթ կենսաապահովման պլանների ճշգրտում:

8. Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝

1) տարահանման մարմինների կողմից ժամանակին ազդարարման, հավաքի և տարահանված բնակչությանը անվտանգ վայրեր տեղափոխելու աշխատանքների վերահսկողություն

2) տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման, ընդունման, բաշխման և անվտանգ գոտում տարահանված բնակչության առաջնահերթ կենսաապահովման աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն

3) հարևան համայնքների հետ փոխգործողությունների կազմակերպում՝ նրանց տարածքներում տարահանված բնակչության ընդունման և բաշխման հարցերով

4) տարահանման միջոցառումների անցկացման և ապահովման համար տարահանման մարմիններին անհրաժեշտ օգնության ցուցաբերում

5) տարահանման պլանի կատարման, տարահանման պլանի ճշգրտման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը վերահսկողություն

6) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մասին տվյալների հավաք և ամփոփում, դրա մասին զեկուցում վերադասին:

9. Խաղաղ ժամանակ բնական և տեխնածին բնույթի ԱԻ ծագման սպառնալիքի դեպքում՝

1) տարահանվող բնակչության ընդունման և տեղաբաշխման պլանավորում
2) կապի և ազդարարման համակարգերի պատրաստության ստուգում
3) տարահանման ենթակա բնակչության թվաքանակի ճշտում
4) տարահանման մարմինների ծավալման պատրաստության բերում
5) տարահանման միջոցառումների ապահովման համար տրանսպորտի պատրաստության վերահսկողություն
6) առկա պաշտպանական կառույցների պատրաստության վերահսկողություն
7) անվտանգ վայրերում, ժամանակավոր տեղակայման կետերում տեղաբաշխման վայրերի պատրաստության հսկողություն:

10. Տարահանման անցկացման կարգադրություն սպանալիս՝

1) տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում կառավարման և կապի կազմակերպում
2) տրանսպորտային ապահովման կազմակերպում
3) բաժնեչափական հսկողության, բնակչության սանիտարական մշակման, տեխնիկայի և հագուստի հատուկ մշակման (անհրաժեշտության դեպքում) կազմակերպում
4) տարահանվող բնակչության ընդունման, հաշվառման և տեղաբաշխման վայրեր տեղափոխման կազմակերպումը
5) բնակչության առաջնահերթ կենսաապահովման կազմակերպում:

III. Տարահանման հանձնաժողովի իրավունքները

11. *Տարահանման հանձնաժողովն իրավունք ունի՝*

1) Իր իրավասությունների շրջանակներում ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման կազմակերպությունների, հաստատությունների և ձեռնարկությունների համար՝ կապված տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման հետ:
2) Հարցում անել կազմակերպություններից, հաստատություններից անհրաժեշտ տվյալների մասին՝ անձնակազմի, նյութական և մշակութային արժեքների տարահանման հարցերի ուսումնասիրման և որոշումների ընդունման համար:
3) Տարահանման միջոցառումների ապահովման հարցերով ունկնդրել կազմակերպությունների, հաստատությունների պաշտոնատար անձանց, սահմանված կարգով անցկացնել խորհրդակցություն տարահանման մարմինների ներկայացուցիչների հետ:
4) Սահմանել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման կազմակերպման հարցերով՝ ՀՀ ԱԻՆ մասնագետների ներգրավմամբ:

IV. Տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը

12. Տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքում ընդգրկվում են՝

1) տարահանման հանձնաժողովի ղեկավարությունը

2) վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբը

3) անվտանգ տարածքում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբը

4) տրանսպորտային ապահովման խումբը

5) հիվանդանոցի անձնակազմի և հիվանդների անվտանգ դուրս բերման հաշվառման խումբը /քաղաքային համայնքներ/

6) սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբը

13. Տարահանման հանձնաժողովի կազմում նշանակվում են. տեղական ինքնակառավարման մարմինների, տարահանման միջոցառումների ապահովմանը մասնակցող կապ ապահովվող կազմակերպության, տնտեսության օբյեկտների պաշտոնատար անձինք՝ բացառությամբ զորահավաքային կարգադրագիր ունեցող անձանց:

V. Տարահանման հանձնաժողովի աշխատանքային կարգը

14. Տարահանման հանձնաժողովի նախագահը կրում է անձնական պատասխանատվություն խաղաղ ժամանակ, ԱԻ ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար:

15. Տարահանման հանձնաժողովի աշխատանքը իրականացվում է տարեկան աշխատանքային պլանով: Տարահանման հանձնաժողովի աշխատանքային պլանը մշակվում է տարահանման հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ համագործակցելով ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) հետ, և հաստատվում է տարահանման հանձնաժողովի նախագահի կողմից:

16. Տարահանման հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են տարահանման հանձնաժողովի արձանագրություններով և ստորագրվում տարահանման հանձնաժողովի նախագահի և տարահանման հանձնաժողովի քարտուղարի կողմից:

17. Տարահանման հանձնաժողովի նիստերն անցկացվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ տարահանման հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ: Տարահանման հանձնաժողովի նիստերը և արձանագրությունների նախագծերը պատրաստում է տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը:

18. Տարահանման հանձնաժողովի առանձին պլանային և արտապլանային նիստերը կարող է անցկացնել տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ տարահանման հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

19. Տարահանման հանձնաժողովի անդամների աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելու համար սահմանվում են ժամկետները.

1) աշխատանքային ժամին՝ 30 րոպե

2) ոչ աշխատանքային ժամին՝ 1ժամ 30րոպե (ձմեռային ժամանակ՝ 2 ժամ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 1 » նոյեմբերի 2013թ N 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության N633-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011թվականի մայիսի 6-ի N164 որոշման 5-րդ կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի նոյեմբերի 1
գ. Գրիբոյեդով

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **Քաղաքացիական պաշտպանության պլանը** սահմանում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը քաղաքացիական պաշտպանության բնագավառում: Պլանի նպատակն է՝ կանոնակարգել համայնքի ղեկավար կազմի և կազմակերպությունների խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը համայնքի բնակչությանն ու նյութական արժեքները պաշտպանելու համար:

2. Պլանում օգտագործվող հիմնական հասկացությունները

քաղաքացիական պաշտպանություն՝ միջոցառումների համակարգ ուղղված բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը կամ պաշտպանության նախապատրաստմանը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում.

արտակարգ իրավիճակ՝ որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման.

բնակչության պաշտպանություն՝ արտակարգ իրավիճակներում մարդկանց կյանքի և առողջության պաշտպանության, ինչպես նաև քաղաքացիների, պետության և այլ սեփականատերերի ունեցվածքի պահպանության նպատակով իրավական, կազմակերպական և ինժեներատեխնիկական միջոցառումներ.

տարահանում՝ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխում և տեղաբաշխում.

պատսպարում՝ արտակարգ իրավիճակներում զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև ոչնչացման հատուկ միջոցների ազդեցությունից մարդկանց կյանքի ու գործունեության ժամանակավոր ապահովում՝ համապատասխան շինությունների տարածքում.

անհատական պաշտպանություն՝ մարդկանց՝ ճառագայթային, թունավոր և մանրէաբանական նյութերից պաշտպանության միջոցներով ապահովում.

փրկարարական աշխատանքներ՝ մարդկանց, նյութական և մշակութային արժեքների փրկության նպատակով միջոցառումների համալիր.

փրկարար ուժեր՝ փրկարարական աշխատանքներ կատարելու համար նախատեսված՝ համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ, մասնագիտացված փրկարարներից բաղկացած կազմավորումներ.

քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝ համայնքներում, կազմակերպություններում ստեղծված կազմավորումներ, որոնք հանդերձավորված են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների համար նախատեսված տեխնիկայով, հանդերձանքով, գույքով և նախատեսված են իրականացնելու քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ և չեն մտնում << զինված ուժերի և այլ զորքերի կազմի մեջ.

քաղաքացիական պաշտպանության ծառայություններ՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, իրենց իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու համար ստեղծված ծառայություններ.

հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտ՝ պետական ու ռազմավարական նշանակության, բարձր վտանգավորություն ունեցող և բնակչության կենսագործունեութ-յունն ապահովող օբյեկտ.

անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ՝ առաջնահերթ աշխատանքներ՝ ուղղված մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող այնպիսի գործոն-ների ազդեցության վտանգի վերացմանը, որոնք խոչընդոտում են մարդկանց որոնելուն և փրկելուն, ինչպես նաեւ շենքերի, շինությունների ամրացմանը կամ փլմանը, հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի և ջրի աղբյուրների վթարային անջատմանը, բնակ-չության ու փրկարարների կենսաապահովման առաջնահերթ օբյեկտները ժամանակավոր սխեմաներով վերականգնմանը, վերանորոգմանը և տարածքի սանիտարական մաքրմանը:

3. Պլանում ներգրավվող մարմինները և դրանց գործառույթները

1) Սույն պլանի մեջ ներգրավվել են Գրիբոյեդովի համայնքապետարանը, համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունները, կազմակերպություն-ների քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:

2) Դրանք իրենց գործունեությունն իրականացնում են համայնքի, կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլանների / պլան-ժամանակացույցերի/ համաձայն:

Համայնքապետը հանդիսանում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը և պատասխանատվություն է կրում հանայնքի քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության համար:

Օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքապետը կազմակերպում է համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները, բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքների վերացման աշխատանքներին:

3) *Համայնքները ՔՊ բնագավառում՝*

ա) կազմակերպում են համայնքի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ) իրականացնում են վթարային և անհետաձգելի վերականգնողական միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներում համայնքային ենթակայության կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար.

գ) կազմակերպում են փրկարարական աշխատանքներ համայնքի տարածքում.

ա) իրականացնում են արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ համայնքի տարածքում.

դ) իրականացնում են համայնքի բնակչության ազդարարումն արտակարգ իրավիճակներում.

ե) իրականացնում են համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.

զ) ստեղծում են համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ.

է) ստեղծում են քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ ուժեր և ապահովում են այդ ուժերի պատրաստականությունը.
ը) իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

4) *Կազմակերպությունները ՔՊ բնագավառում՝*

ա) իրականացնում են իրենց աշխատողների պաշտպանությունը.
բ) աջակցում են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը և ստեղծում են անհրաժեշտ ուժեր՝ համապատասխան աշխատանքներ կատարելու համար:

4. Պլանի իրավական հիմքերն են

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, <Քաղաքացիական պաշտպանության մասին > Հայաստանի Հանրապետության օրենքը, <Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքը, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքը, <Պաշտպանության մասին > Հայաստանի Հանրապետության օրենքը, < Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքը, 2003թվականի ապրիլի 10-ի <Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին> թիվ 384-Ն, 2003 թվականի նոյեմբերի 13-ի <Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին > թիվ 1532 – Ն, 2000 թվականի հոկտեմբերի 25-ի <Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին> թիվ 679, 2000 թվականի սեպտեմբերի 28-ի <Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին> թիվ 592, 1999 թվականի դեկտեմբերի 13-ի <Վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին > թիվ 746, 2010 թվականի հունիսի 24-ի <Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին > թիվ 824-Ն, 2004 թվականի ապրիլի 22-ի <Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգի> վերաբերյալ թիվ 633-Ն որոշումները և այլ իրավական ակտեր:

II. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

2.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1) Գրիբոյեդով համայնքը գտնվում է Արմավիրի մարզի արևելյան մասում, տարածքը կազմում է 7.3 կմ^2: Համայնքի հեռավորությունը պետական սահմանից կազմում է 20 կմ, մարզկենտրոնից՝ 25 կմ, ավտոմայրուղուց՝ 1 կմ, Երկաթուղուց՝ 10 կմ, ՀԱԷԿ-ից՝20 կմ:
Համայնքը սահմանակից է Էջմիածին, Արտիմետ, Խորոնք, Ակնաշեն և Ապագա համայնքներին:

2) Համայնքի բնակչությունը կազմում է 1966 մարդ, որից՝ 0-1 տարեկան 36 մարդ, 1-4 տարեկան 65 մարդ, 4-7 տարեկան 84 մարդ, 8-17 տարեկան 264 մարդ, 18 և բարձր 1497 մարդ, թոշակառուներ 226 մարդ:

3) Համայնքի տարածքի առավելագույն բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 840 մ:

4) Համայնքի կլիման չոր ցամաքային է, ցուրտ սակավաձյուն, պարզկա ձմեռներով ու շոգ չորային ամառներով: Օդի միջին ջերմաստիճանը ձմռանը տատանվում է -3-ից -25 աստիճան ըստ Ցելսիուսի, ամռանը՝ 13-ից 39 աստիճան:

5) Համայնքի տարածքում գործում են՝ մեկ ուսումնական հաստատություն, մեկ նախադպրոցական հաստատություն, մեկ բժշկական հաստատություն:

6) Համայնքի տարածքով անցնում են Մ-3 և Ակնալիճ-Գրիբոյեդով մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհները: Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 6 կմ, որից միջպետական՝ 1 կմ և մարզային նշանակության՝ 5 կմ:

7) Համայնքի տարածքում առկա են՝ Մ-3 – Գրիբոյեդով ճանապարհի 1-ին կմ վրա գտնվող՝ 10 *14 *2 չափսերի կամուրջը:

8) Համայնքի տարածքում առկա են՝ 4 բաշխիչ և 6 տրանսֆորմատորային ենթակայաններ՝ 2200 ԿՎՏ ընդհանուր հզորությամբ: Էլեկտրահաղորդման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 42.2 կմ, որից՝ բարձր լարման 2.8 կմ, ցածր լարման 39.4 կմ:

Համայնքում խմելու ջրի ջրամատակարարման համակարգը սնուցվում է 14 ջրաղբյուրից, արտեզյան հորերից:

Համայնքը գազաֆիկացված է , գազամատակարարման ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 15.6կմ, տեղակայված են 2 գազաբաշխիչ կայաններ:

9) Համայնքի գյուղատնտեսական կենդանիների և թռչունների քանակը կազմում է՝ խոշոր եղջերավոր անասուններ 421 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 99 գլուխ, խոզեր՝ 55 գլուխ, մեղվաընտանիք՝ 40 փեթակ, թռչուններ՝ 2307 թև:

10) Համայնքի տարածքով է անցնում Սև ջուր գետը՝ 6 կմ երկարությամբ, Արևաշատի պոմպակայանին մոտեցնող ջրանցք՝ 2կմ:

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՁԵՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ Արմավիրի մարզում հնարավոր է հանդիսանան՝

1) համայնքապետարանը, դպրոցի շենքը, մշակույթի կենտրոնը:
2) պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, բարձր վտանգավորություն ներկայացնող, հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտները և կազմակերպությունները, ջրամբարները.
3) գազատարը, թվով 2 գազաբաշխիչ կայանները.
4) օրվա կարգավորիչ ջրամբարները, / բնական ջրամբարը/, ջրագծերը.
5) էլեկտրական ենթակայանները և օդային գծերը.
6) հեռախոսային կապի գծերը.
/ֆիքսված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները, համայնքի տարածքում գտնվող հեռուստաաշտարակները, գործող տեղական հեռուստաընկերությունները, «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժանմունքները/.
7) ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները ու ճանապարհային կառույցները.
8) բնակելի (շենքերը և տները) ֆոնդի տարածքները:

2.3. ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հակառակորդի գործողությունների արդյունքում Գրիբոյեդով համայնքի տարածքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

1) հասարակական շենքերի և օբյեկտների փլուզումների ծավալը կկազմի 2500 մ^3.
2) ՀԱԷԿ-ի վթարի դեպքում համայնքը չի հայտնվի վարակվածության գոտում.
3) Ապարանի պատվարի փլուզման դեպքում համայնքը կհայտնվի աղետալի ջրածածկման գոտում `100 %-ով .

4) հրդեհների օջախների թիվը կկազմեն 4 հատ.

5) բնակչության շրջանում տուժածները կկազմեն. անվերադարձ՝ 45 մարդ, սանիտարական՝ 96 մարդ.

6) ավտոճանապարհների ինժեներական կառույցների վնասման պարագայում անհնար կդառնա տարահանումը և փրկարարական ուժերի առաջանցումը դեպի վնասված գոտիներ.

7) գազամատակարարման ցանցի վթարների կկազմեն 2 հատ.

8) էլեկտրամատակարարման ցանցի վթարները կկազմեն 3 հատ.

9) ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարները կկազմեն՝ 1 հատ.

10)դիվերսիոն գործողությունների հետևանքով կարող է աղտոտվել համայնքների ջրամատակարարման օրվա կարգավորման ջրամբարները, բաց աղբյուրները, ինչպես նաև կապտաժները.

11) կընդհատվի ֆիքսված և բջջային կապն ամբողջովին.

12)հնարավոր է ընդհատվեն կենտրոնական և /կամ/ տեղական հեռարձակման ալիքների հաղորդումները, փոստային հաղորդակցությունը.

13)բժշկական հիմնարկների շարքից դուրս գալու դեպքում անհնար կլինի բժշկական սպասարկումը:

III ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՈՒԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

3.1. ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՈՒԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1) Գրիբոյեդով համայնքի ղեկավար կազմը՝ <Մշտական> պատրաստականության աշխատակարգում զբաղվելով իրենց ամենօրյա աշխատանքային գործունեությամբ, պետք է պատրաստ լինեն քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը:

2) Հայաստանի Հանրապետության զինված ուժերը <Բարձր> պատրաստականության աստիճանի փոխադրվելու ժամանակ, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները անցկացնում են <Բարձր> պատրաստականության աշխատակար-գի միջոցառումներ՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի պատրաստությանը, ինչպես նաև հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանը:

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության համակարգը փոխադրվում է «<Լրիվ> պատրաստականության աշխատակարգի Հայաստանի Հանրա-պետության Նախագահի կողմից ռազմական դրություն հայտարարվելու դեպքում:

4) Եթե մինչև Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելը քաղաքացիական պաշտպանության <Բարձր> պատրաստականության աշխատակարգի միջոցառումները չեն իրականացվել, կամ իրականացվել են ոչ բոլոր միջոցառումները, ապա դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:

5) Քաղաքացիական պաշտպանության համակարգի <Լրիվ> պատրաստականության աշխատանքային ռեժիմի դեպքում քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմը իրենց լիազորությունների սահմանում գործողության մեջ են դնում քաղաքացիական պաշտպանության պլանները, կազմակերպում ու անցկացնում են այդ պլաններով նախատեսված միջոցառումները:

7) Քաղաքացիական պաշտպանության համակարգը ռազմական դրության <Լրիվ> աշխատանքային ռեժիմի է փոխադրվում 48 ժամվա ընթացքում:

8) Մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու վերաբերյալ ազդանշանների հաղորդումն իրականացվում է՝

ա)Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետի միջոցով:

3.2. ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ օգտագործվում է մարզում գործող քաղաքային և միջքաղաքային գործող ցանցերը, բջջային և ֆաքսիմիլային կապերը ինչպես նաև կարճալիք և գերկարճալիք ռադիոկապի միջոցները:

2) Կապի կազմակերպման համար անհրաժեշտ կապուղիների և ուղիղ գծերի տրամադրումը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը ըստ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության նախօրոք ներկայացված հայտի:

3) Համայնքների ղեկավար կազմի ազդարարումը իրականացվում է Արմավիրի մարզային փրկարարական վարչության դիսպետչերի և /կամ/ համապատասխան կապի հանգույցների միջոցով:

3.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Քաղաքացիական պաշտպանության հետախուզությունը իրականացվում է համայնքի ամբողջ տարածքում:

ա) Հետախուզության նպատակն է իրադրության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռքբերում՝ որոշումներ ընդունելու համար՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը:

բ) Հետախուզական ուժերի կազմի մեջ մտնում են՝

* համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների հետախուզական ուժերը,
* կազմակերպությունների մասնագիտացված հետախուզական ուժերը,

2) **Հետախուզության առարկա են հանդիսանում՝**

ա) լրիվ և ուժեղ ավերածությունների ու աղետալի ջրածածկման գոտում հայտնված տիղմապատված տարածքները.

բ) հրդեհների օջախները.

ե) բնակչության տարահանման երթուղիները.

գ) գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների օջախները.

դ) պաշտպանական կառույցները և մարդկանց այլ հավաքատեղիները, շրջակա միջավայրի օբյեկտները:

3) **Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում հետախուզության հիմնական խնդիրներն են՝**

ա) շրջակա միջավայրի վարակվածության նկատմամբ անընդհատ դիտարկում և լաբորատոր հսկողության իրականացում,

բ) սանիտարահամաճարակային վիճակի ճշգրտում.

գ) տարահանման երթուղիների վիճակի ճշգրտում.

4) **Հակառակորդի հարձակումից հետո հետախուզության հիմնական խնդիրներն են՝**

ա) կիրառված զենքերի տեսակների, հարվածի ենթարկված տարածքների և օբյեկտների բացահայտում,

բ) ճառագայթային և թունավոր նյութերի, մանրէաբանական միջոցներով վարակված տարածքների սահմանների հայտնաբերում

դ) կոմունալ ցանցի և գազամատակարարման գծերի վիճակի ճշգրտումը.

ե) կապի գծերի վիճակի ճշգրտում.
զ) ավտոճանապարհների և ճանապարհային կառույցների վիճակի ճշգրտում.
է) էներգետիկ ցանցի վիճակի ճշգրտում.
ը) հրդեհների հայտնաբերում.
5) Հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով.

3.4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.4.1 ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Անհատական պաշտպանության միջոցները նախատեսված են պաշտպանելու մարդու օրգանիզմը, մաշկը և հանդերձանքը ռադիոակտիվ, ուժեղ ներգործող թունավոր նյութերից և մանրէաբանական միջոցներից:
2) Անհատական պաշտպանության միջոցները բաժանվում են 2 խմբի՝ շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ և մաշկի պաշտպանության միջոցներ:
3) Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ են հանդիսանում զտող և մեկուսացնող հակագազերը, շնչադիմակները և հասարակ միջոցները՝ փոշի չթափանցող գործվածքային դիմակները և բամբակաթանզիֆային վիրակապերը:
4) Բնակչության պաշտպանության նպատակով օգտագործվում են մի քանի տիպի զտող հակագազեր՝

ա) համազորային՝ նախատեսված զորքերի և քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի պաշտպանության համար.

բ) քաղաքացիական՝ նախատեսված կազմավորումների անձնակազմի և բնակչության համար.

գ) արդյունաբերական՝ նախատեսված ուժեղ ներգործող թունավոր նյութերից պաշտպանվելու համար:

5) Արմավիրի մարզպետի հայտի հիման վրա, դուրս են գրվում հայտագրեր և Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետը կազմակերպում է համապատասխան պահեստներից անհատական պաշտպանության միջոցների տեղափոխումը բաշխման կետեր:
6) Անհատական պաշտպանության միջոցների բաշխումը կազմավորումների անձնակազմին, կազմակերպությունների աշխատողներին և բնակչությանը իրականացվում է անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերում, որոնք ծավալվում են տարահանման հավաքակայաններում, կազմակերպություններում, ուսումնական և բժշկական հաստատություններում:

Համայնքի բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը՝ հավելված 7 ում;

3.4.2. ՊԱՏՍՊԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատսպարումը ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվում է<Օդային տագնապ> ազդարարման ազդանշանով:
2) Պատսպարումն համայնքում իրականացվում է հետևյալ պաշտպանական կառույցներում՝

ա) հակաճառագայթային թաքստոցներում,

բ) բնակելի ֆոնդի տարածքներում (նկուղային տարածքներ և կիսանկուղներ),

գ) Ռազմական դրության ժամանակաշրջանում աշխատանքները շարունակող կազմակերպությունների աշխատող հերթափոխերի պատսպարումն իրականացվում է տվյալ կազմակերպության տարածքում տեղաբաշխված պաշտպանական կառույցներում:

Համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը՝ հավելված 6 ում:

3.4.3. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա գինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

2) Համայնքի բնակչության տարահանման միջոցառումները իրականացվում են համայնքի բնակչության տարահանման պլանին համապատասխան:

3) Զենքի տեսակների կիրառման դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում Արմավիրի մարզում որոշում ընդունում են Արմավիրի մարզպետը, տվյալ տարածքի զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

Տվյալ պարագայում համայնքի բնակչության տարահանման մասին որոշում կարող է ընդունել նաև համայնքապետը:

4) Տարահանման միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով՝ համայնքապետի որոշմամբ ստեղծվել է տարահանման հանձնաժողով:

Տարահանման հավաքակայաններից բնակչությունը տեղափոխվում է համայնքում առկա սարքին տրանսպորտային միջոցներից կազմավորված շարասյուներով:

Շարասյուները կարող են լինել նաև հետիոտն;

5) Համայնքում տարահանման հավաքակայան ստեղծված է Նար-Դոսի 1/1 հասցեում գտնվող դպրոցում և ապահովված է կապի միջոցներով, մոր և մանկան սենյակով, բուժկետով, հանգստի սենյակով:

Բնակչությունը տարահանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում է տարահանման հավաքակայան:

6)Տարահանվող բնակչության ընդունման նպատակով՝ տարահանման հանձնաժողովը իրականացնում է տարահանվածների ընդունման հանձնաժողովի գործառույթներ:

Տարահանվող բնակչության համար որպես ժամանակավոր կացարաններ օգտագործվում են դպրոցը, մշակույթի տունը և բնակելի տները:

Բնակչության տարահանման / տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման/ հաշվարկները՝ հավելված 6-ում:

3.5. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

3.5.1. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Հակառակորդի հարվածից հետո իրավիճակի գնահատմանն զուգընթաց իրականացվում է խափանված կառավարման համակարգի վերականգնում և փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում:

Այդ աշխատանքներում ներգրավվում են ՀՀ ԱԻՆ ՀՓԾ մարզային փրկարարական վարչության մասնագիտացված ստորանաժանումները, ՔՊ ծառայությունների, համայնք-ների, կազմակերպությունների և տարածքային կազմավորումները:

Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման նպատակով համայնքում ստեղծված են՝

- համալիր փրկարարկան խումբ /ջոկատ/- __9_ մարդ անձնակազմով,
- հետախուզական խումբ _ 3 _ մարդ անձնակազմով,
- ճառագայթային և քիմիական դիտարկման ջոկ _3_ մարդ անձնակազմով,
- բժշկական օղակ _3_ մարդ անձնակազմով,
- կապի ջոկ _3__ մարդ անձնակազմով,
- հասարակական կարգի պահպանման խումբ __5_ մարդ անձնակազմով,

- գյուղ.կենդանիների և բույսերի պաշտպանության խումբ __3_ մարդ անձնակազմով:
2) Փրկարարական աշխատանքները ներառում են՝
ա) հետախուզությունը,
բ) հրդեհների մարումը,
գ) տուժածների որոնումը, բժշկական օգնության ցուցաբերումը, դուրս բերումը վտանգավոր տարածքներից և բժշկական հաստատություններ տեղափոխումը,
դ) թաքստոցների և ապաստարանների մուտքերի մաքրումը,
ե) վտանգավոր տարածքներից բնակչության տարահանումը:
զ) հասարակական կարգի ապահովումը:
3) Բնակելի հատվածներում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում փլված շինություններում տուժածների որոնմանը և բուժօգնության ցուցաբերմանը:
4) Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը, ձևերը և կատարման կարգը կախված են փլվածքների բնույթից, վթարների տեսակից, երկրորդային վտանգ ներկայացնող գործոններից:

3.5.2 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Համայնքի ուժերի խմբավորումը Արմավիրի մարզում առկա քաղաքացիական պաշտպանության ուժերի մի մասն է, նախատեսված համայնքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու համար:
1) Ուժերի խմբավորման կազմը, քանակը և հագեցվածությունը որոշվում է Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով, համայնքապետի համապատասխան որոշմամբ:
2) Ուժերի խմբավորման մեջ ընդգրկվում են համայնքի ՔՊ կազմավորումները:
3) Ուժերի խմբավորման մեջ չեն ներառվում պաշտպանության, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության կազմավորումները:
3) Ուժերի խմբավորման անմիջական ղեկավարումն իրականացնում է համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը՝ համայնքապետը:

3.6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.6.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հասարակական կարգի պահպանումը ռազմական դրության ժամանակ համայնքում, կազմակերպություններում, տարահանման հավաքակայանում հասարակական կարգի, գույքի ինչպես նաև տարահանված բնակավայրերի պահպանությունն է:
Համայնքում հասարակական կարգի ապահովումն իրականացվում է համայնքի ՔՊ հասարակական կարգի պահպանման խումբը:
Հասարակական կարգի պահպանման միջոցառումներն իրականացվում են պահակակետերում, հսկիչ-անցագրային կետերում, երթուղիներում, մարդաշատ ու զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում:
Համայնքում հասարարական կարգի պահպանությունն ուժեղացվում է ոստիկանության մարզայի վարչության, ոստիկանության զորքերի համապատասխան ուժերի և միջոցների հաշվին:

3.6.2. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպչական և ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են հրդեհների կանխմանը կամ տարածման

արգելմանը, մարդկանց պաշտպանությանը հրդեհներից, բարձր ջերմաստիճանից և ուժեղ ծխապատված գոտիներից:

Մարզի տարածքում զանգվածային հրդեհների առաջացման պայմաններում մարզի հրշեջ-փրկարարական ջոկատների ուժերը չեն կարող բավարար լինել, ուստի հակահրդեապահովմանը ընդգրկվում են նաև քաղաքացիական պաշտպանության կազմավորումները, հասարակական ուժեր և բնակչությանը:

2. Հակահրդեհային ապահովման մեջ ընդգրկվում են հրդեհային հետախուզությունը, հրդեհի մեկուսացումը և մարումը:

3. Հակահրդեհային պաշտպանության տեսակետից առաջնահերթ արձագանքվում են՝

ա) տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերը.

բ) պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, բարձր վտանգավորություն ներկայացնող, հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող ու հրդեհապայթունավտանգ կազմակերպությունների վարչական շենքերը.

գ) էներգամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, կապի, առողջապահական ու բնակչության կենսապահովման կազմակերպությունների շենք-շինությունները:

4. Հրդեհը համարվում է մեկուսացված, երբ մարդկանց և կենդանիներին վտանգ չի սպառնում, հրդեհի տարածումը սահմանափակված է և ապահովված է այն եղած ուժերով ու միջոցներով մարելու հնարավորությունը:

Հրդեհը համարվում է մարված, երբ այրումը դադարեցված է և միջոցներ են ձեռնարկված դրա նոր բռնկումը կանխելու համար:

Հրդեհաշիջման աշխատանքները համարվում են ավարտված, երբ բացառվում է նոր բռնկման հնարավորությունը:

3.6.3. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխմանը, շրջակա միջավայրի օբյեկտների (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության կազմակերպմանը:

Համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովումը իրականացվում է համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական օղակը, հետագայում ընդգրկվում են նաև մարզի ԲՊ բժշկական ծառայության ուժերը:

2. Մարզի բժշկական ապահովումը իրականացվում է առկա առողջապահական հիմնարկների ուժերով և միջոցներով, ինչպես նաև բժշկական ծառայության քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ուժերով: Բժշկական ապահովման միջոցառումների իրականացմանը հնարավոր է նաև առողջապահական և այլ ուսումնական հաստատությունների սովորողների մասնակցությունը: Արմավիրի մարզում այդ հաստատություններից է Արմավիրի բժշկական քոլեջը:

3. Սահմանամերձ համայնքներում և ՀԱԷԿ-ի վթարային հակազդման գոտիների համայնքներում տարահանման միջոցառումների կազմակերպման դեպքում ծավալվում են բուժսպասարկման կետեր:

4. Սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները կատարվում են տեղերում՝ ՊՀՀՏ մարզային փորձագիտական կենտրոնի, սննդի անվտանգության և անասնաբուժության մարզային կենտրոնի ուժերով և միջոցներով:

5. Սահմանամերձ համայնքներում և ՀԱԷԿ-ի վթարային հակազդման գոտիների համայնքների բնակչությանը անհատական պաշտպանության բժշկական միջոցներով և կայուն յոդի պատվաստուկներով ապահովումը կատարվում է վաղորոք՝ համայնքների բժշկական կազմակերպությունների բաշխման կետերում, նախօրոք կազմված հաշվարկների համաձայն:

3.6.4. ՍՆՆԴԱՄԹԵՐԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Քաղաքացիական պաշտպանության սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված քաղաքացիական պաշտպանության ուժերին, միջոցներին, ինչպես նաև տուժած բնակչությանը անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցներով և սննդամթերքով ժամանակին ու անխափան մատակարարմանը:

Համայնքի քաղաքացիական պաշտպանության սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է մարզի տարահանման հանձնաժողովին՝ համայնքի ղեկավարի կողմից վաղորոք ներկայացված հայտի հաշվարկներով:

2. Մարզի առևտրի և սննդի, նյութատեխնիկական մատակարարման մարզային ծառայությունը տարահանման հանձնաժողովից ստանալով համապատասխան տվյալներ՝ տարահանվող բնակչության վերաբերյալ, ստեղծում է բնակչության ժամանակավոր կացարան-ներին կից բաշխման շարժական կետեր:

3. Անհրաժեշտ սննդամթերքը, հագուստը, առաջին անհրաժեշտության ապրանքները պետական պահուստից, սննդի և առևտրի խոշոր կազմակերպություններից այլ ծառայությունների հետ համատեղ կազմակերպում են նյութական միջոցների կուտակումը, տեղափոխումը, պահպանումը և բաշխումը համապատասխան մարզային շարժական կետերում:

4. Մարզային քաղաքացիական պաշտպանության տրանսպորտի ծառայությունը տրամադրում է անհրաժեշտ քանակի բեռնատար, սառնարանային ավտոտրանսպորտ և ավտոբենզատարներ՝ քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային միջոցառումների ապահովման համար, ներառյալ համայնքում առկա համապատասխան տրանսպորտային միջոցները:

5..Նյութական միջոցների պահպանությունն իրականացնում է քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանության ծառայության ուժերով:

/Սննդամթերային և նյութատեխնիկական հաշվարկը՝ հավելված _____ ում:/

3.6.5. ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1.Լուսաքողարկումը ժամանակակից զենքի տեսակներից քողարկման տեխնիկական ապահովումն է: Այն անցկացվում է մթություն ստեղծելու նպատակով, օրվա ցանկացած ժամին, դժվարացնելով համայնքների և կազմակերպությունների հայտնաբերումը օպտիկական սարքերի միջոցով կամ բարձրությունից՝ տեսանելի հայտնաբերման ճանապարհով:

Լուսաքողարկման գոտում գտնվող բնակավայրերում ու կազմակերպություններում լուսաքողարկման միջոցառումներն իրականացվում են նախօրոք:

Լուսաքողարկման գոտում չգտնվող բնակավայրերում ու կազմակերպություններում իրականացվում են կազմակերպչական միջոցառումներ, -որոնք ուղղված են բնակավայրերի ու կազմակերպությունների արտաքին լուսավորության անջատմանը, ինչպես նաև «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում արտադրական լույսերի լուսաքողարկման նախապատրաստմանը:

2. Լուսաքողարկման կազմակերպչական միջոցառումները ներառում են՝

ա) բնակավայրերի և կազմակերպությունների էլեկտրալուսավորության կառավարման կետերի հերթապահ անձնակազմի նախապատրաստումը,

բ) ռազմական դրության ժամանակ օրվա մութ ժամերին հերթապահության կազմակերպումը, բնակավայրերի արտաքին և ներքին լուսավորման անջատումը,

գ) ռազմական դրության ժամանակ օրվա մութ ժամերին համայնքապետարանների և համատիրությունների համապատասխան աշխատակիցների վերահսկմամբ՝ բնակարաններում և ընդհանուր օգտագործման բնակավայրերում լուսավորության անջատման համար հերթապահ անձնակազմի նախապատրաստում և հերթապահության կազմակերպում,

դ) կազմակերպությունների անվթար կանգնեցման և արդյունաբերական ագրեգատների ու սարքավորումների տեխնոլոգիական լուսային ճառագայթումը նվազագույնին հասցնելու նպատակով՝ պլանների և կազմակերպական միջոցառումների մշակում:

3. Լուսաքողարկումը նախատեսվում է 2 ռեժիմով՝

ա) մասնակի մթնեցում

բ) լրիվ մթնեցում:

1) Մասնակի մթնեցման ռեժիմ մտցնելով տարածքներում պետք է՝
ա) անջատվեն մի շարք օբյեկտների արտաքին լուսավորության սարքերը և նվազեցվեն մյուս օբյեկտների լուսավորությունները, ինչպես նաև լրիվ մթնեցման ռեժիմում աշխատելու համար նախատեսված լուսամփոփների և նշանների վրա տեղադրվեն քողարկման հարմարանքներ.
բ) փորձարկվեն աշխատանքային լուսավորության անջատման ու քողարկման լուսավորության միացման համակարգերը:
2) Լրիվ մթնեցման ռեժիմ մտցնելու համար անհրաժեշտ է՝
ա) արտաքին լուսավորության անջատում,
բ) արտադրական լույսերի լուսաքողարկման միջոցառումների իրագործում,
գ) լրիվ մթնեցման ռեժիմում աշխատանքների համար նախատեսված լուսամփոփների ու լուսային նշանների միացում,
դ) լրիվ մթնեցման պայմաններին համապատասխանող արտադրության տեխնոլոգիայի անցման իրականացում,
ե) արտադրական լույսերի լուսաքողարկման իրականացում,
զ) լուսային, լուսաէրացիոն, աէրացիոն արդյունաբերական կառույցների որմնախորշերի լուսաքողարկման իրականացում:
4. Լրիվ մթնեցման ռեժիմը մտցվում է< Օդային տագնապ > ազդանշանով և ավարտվում է <Օդային տագնապի > ավարտ ազդանշանով:
Մասնակի մթնեցման ռեժիմից լրիվ մթնեցման ռեժիմի անցնելը պետք է իրականացվի ոչ ավելի քան 3 րոպեում (արտադրական լույսերի լուսաքողարկման անցում՝ մինչև 10 րոպե):
Քաղաքային տրանսպորտը, ինչպես նաև երթևեկությունը կարգավորող միջոցները մասնակի մթնեցման ռեժիմում լուսքողարկման ենթակա չեն, իսկ լրիվ մթնեցման դեպքում՝ անջատվում են:

3.6.6. ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Չափագիտական ապահովումը չափումներ իրականացնող քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների ատեստավորման, ստուգաչափման, կարգաբերման, վերանորոգման, ճիշտ աշխատունակության և տակտիկա-տեխնիկական տվյալների պահպանման կազմակերպչական տեխնիկական միջոցառումների համալիր է:
1. Չափագիտական ապահովումը ներառում է՝
ա) քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների պահպանման, կիրառման, վերանորոգման, ստուգաչափման, անսարք միջոցների դուրս գրման գործընթացների ճիշտ կիրառումը,
բ) քաղաքացիական պաշտպանության սարքերի տեխնիկական բնութագրերի հավաստի գնահատման ապահովումը՝ չափիչ միջոցների կիրառմամբ,
գ) չափագիտական ապահովման նպատակով ուժերի և միջոցների նախապատրաստումը,
դ) անձնակազմի ուսուցումը քաղաքացիական պաշտպանության սարքերի ճիշտ շահագործման պահպանման և խնամքի ուղղությամբ:
Համայնքում չափագիտական ապահովման գործառույթներն իրականացվում է ճառագայթային և քիմիական դիտարկման ջոկի ուժերով:

3.6.7 ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության հիդրոօդերևութաբանական ապահովումը կազմակերպվում և իրականացվում է խաղաղ, քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման և ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում, բնակչության և տարածքների պաշտպանության միջոցառումների ընթացքում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների ազդեցությունը, փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանները հաշվի առնելու նպատակով:
2. Համայնքների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության մարմինները հիդրոօդերևութաբանական տվյալները ստանում են «Հայաստանի Հանրապետության հիդրո-օդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն

պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային ստորաբաժանման համապատասխան ստորաբաժանումներից:

3. <Հայաստանի Հանրապետության հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն> պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային ստորաբաժանումը ապահովում է՝
ա) օպերատիվ-վերլուծական խմբերի կազմում ընդգրկված մասնագետ-հիդրոօդերևութաբանների ներկայությունը կառավարման պահեստային կետում.
բ) վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների մասին տեղեկատվության տրամադրումը օպերատիվ վերլուծական խմբերին.
4. Հիդրոօդերևութաբանական դիտարկումները սովորական պայմաններում իրականացվում են օրական 8 անգամ (3 ժամը մեկ), ռադիացիոն ֆոնի որոշումը՝ օրական մեկ անգամ, իսկ քաղաքացիական պաշտպանության խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ և ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում՝ ըստ անհրաժեշտության հաճախականացված ռեժիմով:

3.6.8. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ապահովումը միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար նախատեսված բոլոր տիպի տրանսպորտային միջոցների նախապատրաստումը, աշխատունակ վիճակում պահպանումը, բաշխումը և շահագործումը:
1. Համայնքում հաշվառվում և տրանսպորտային միջոցներ է հատկացնում՝
ա) բնակչության և նյութական արժեքների տարահանման տրանսպորտային ապահովման համար.
բ) փրկարարական ուժերի տեղափոխման համար.
գ) տուժածների փոխադրման համար.
դ) անհրաժեշտ սննդամթերքը, հագուստը, առաջին անհրաժեշտության ապրանքները պետական պահուստից, սննդի և առևտրի խոշոր կազմակերպություններից տեղափոխելու և համապատասխան մարզային շարժական կետերում բաշխումը կազմակերպելու համար:
2. Տրանսպորտային ապահովման ուժերն ու տեխնիկական միջոցները ներառում են համայնքում առկա գործող տրանսպորտային միջոցները: Տրանսպորտային միջոցների անհրաժեշտ քանակի չբավարարելու դեպքում, համայնքապետը հայտ է ներկայացնում մարզի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայությանը:

3.6.9. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների առաջանցման հիմնական ու շրջանցիկ ուղիների ապահովմանը, խոցման օջախներում և աղետալի ջրածածկման գոտիներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:
1. Ինժեներական ապահովումը ներառում է՝
1) Պաշտպանական կառույցների պատրաստ վիճակում պահպանումը,
2) Պատսպարվողների ընդունման և պատսպարման ընթացքում այդ կառույցների շահագործման աշխատանքների իրականացումը:
2. Նկուղային հարկերը որպես թաքստոց հարմարեցնելու համար անհրաժեշտ է կատարել փոփոխություններ.
ա) ծածկը ամրացնելու համար դրվում են հենակներ,
բ) պատուհանները փակում են քարով ու շաղախով կամ ավազով ցված պարկերով,
գ) փակվում են դռների անցքերը,
դ) պատրաստվում են օդի թափանցման և արտամղման օդանցքներ:

3. Պաշտպանական կառույցներում մարդկանց ընդունելու համար իրականացվում են հետևյալ նախապատրաստական միջոցառումները՝
ա) բացել բոլոր մուտքերը պատսպարվողներին ընդունելու համար,
բ) դադարեցնել տեխնոլոգիական սարքավորումների աշխատանքները,
գ) փակել տեխնոլոգիական ճեղքերը,
դ) ստուգել և անհրաժեշտության դեպքում կատարել վարակազերծում,
ե) դուրս բերել բոլոր խոշոր սարքավորումները, նյութերը, որոնք խանգարում են մարդկանց տեղավորմանը,
զ) մաքրել պաշտպանական կառույց տանող ուղիները, տեղադրել ցուցատախտակներ և միացնել <ՄՈՒՏՔ > ցուցանակը,
է) տեղադրել և միացնել ռադիոկապ և հեռախոսակապ,
ը) տեղադրել նստարաններ մարդկանց տեղավորելու համար, նախապատրաստել անհրաժեշտ գույք և վերականգնման նյութեր,
թ) ստուգել օդի մատակարարման, ջրամատակարարման, էներգոմատակարարման և կոյուղու համակարգերը, կատարել դիզելային էլեկտրոկայանի փորձարկում,
ժ) ստուգել հերմետիկությունը,
ժա) դեղարկղերը լցնել անհրաժեշտ դեղանյութերով,
ժբ) ջրի տարողությունները լցնել խմելու ջրով,
ժգ) պաշտպանական կառույց տեղափոխել հագեցվածության գույքաթերթով նախատեսված միջոցների չբավականացնող քանակը:
4. Նախատեսված բոլոր միջոցառումների կատարումը չպետք է գերազանցի ժ+12 ժամը:
5. ՔՊ միջոցառումների պլանաչափ իրականացման դեպքում նախատեսվում է մինչև 24 ժամը առկա նկուղային և այլ ստորգետնյա շինությունները հարմարեցնել որպես հակաճառագայթային թաքստոցներ:
6. Պաշտպանական կառույցների սպասարկումն ու պատսպարման կազմակերպումն իրականացվում է նախօրոք ստեղծված քաղաքացիական պաշտպանության կազմավորումների միջոցով:
/ Բնակչության պատսպարման հաշվարկը՝ հավելված 5-ում, ամրագրման հաշվարկը՝ աղյուսակ _____ ում/:

3.6.10. ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական պաշտպանությունը հանդիսանում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխման ու դրանց հետևանքների վերացման միջոցառումների բաղկացուցիչ մասը:

2. Ճառագայթային պաշտպանության կազմակերպման միջոցառումներն են՝
ա) բնակչության ազդարարումը,
բ) բնակչության պատսպարումը,
գ) բնակչության, ընտանի կենդանիների, նյութական արժեքների տարահանումը,
դ) վահանաձև գեղձի արգելափակման իրականացումը,
ե) ճառագայթաակտիվության մշտական հսկողության սահմանումը, դիտարկման իրականացումը,
զ) մարդկանց և կենդանիների սանիտարական մշակումը,
է) ապաակտիվացման (տեղանք, շենքեր և շինություններ, տեխնիկա, նյութական արժեքներ և այլն) աշխատանքների կատարումը:
3. Համայնքում ճառագայթային և քիմիական իրավիճակի հսկողությունն իրականացվում է ճառագայթային և քիմիական դիտարկման ջոկի ուժերով:
4. Համայնքի բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը իրականացվում է համայնքում և կազմակերպություններում ստեղծված բաշխման կետերի միջոցով, նախապես կազմված հաշվարկների համաձայն:

5. Դիտարկման կետը ՃՔՄ հսկողության սարքերով ապահովումը իրականացվում է պետպահուստի ֆոնդից՝ համայնքի քաղաքացիական պաշտպանության պետի՝ մարզի քաղաքացիական պաշտպանության պետին ներկայացրած հայտի համաձայն:

3.6.11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Գյուղատնտեսական կենդանիների և բույսերի պաշտպանության կազմակերպումն իրականացվում է ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի մեջ ընդգրկված կազմակերպությունների և քաղաքացիական պաշտպանության տարածքային կազմավորումների ուժերով: Այդ նպատակով համայնքում ստեղծված է գյուղ.կենդանիների և բույսերի պաշտպանության խումբ:

2. Գյուղատնտեսական կենդանիների տարահանումը կազմակերպվում է գյուղ. կենդանիների և բույսերի պաշտպանության խմբի ուժերով՝ նախանշելով տարահանման սկիզբը, տարահանման երթուղին, տարահանման անասնաբուժական հսկողության կարգը:

3. Համայնքների գյուղատնտեսական կենդանիների (421 գլուխ խոշոր եղջերավոր, 99 գլուխ մանր եղջերավոր անասունների) տեղափոխումն իրականացվում է տրանսպորտայինի միջոցներով կամ հետիոտն եղանակով՝ տվյալ համայնքի բնակչությանն ընդունող բնակավայր:

3.7. ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Գրիբոյեդով համայնքի բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ /բնակչության ազդարարում, տարահանում, մասնակցություն հանրապետության պաշտպանությանը, ՔՊ մոբիլիզացիոն ռեսուրսների տրամադրում /, անհրաժեշտություն է առաջանում գործողությունների համաձայնեցում Արմավիրի ՄՓՎ և Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության շտաբի հետ՝ հետախուզություն և իրավիճակի վերաբերյալ տվյալների ժամանակին փոխանցման միջոցով, որը կապահովի ճիշտ և օպերատիվ որոշումների կայացմանը:

IV. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

4.1. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ «ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

1. <Օդային տագնապ> ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ՝ միացվում են էլեկտրաշչակները և տրվում է տատանվող երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան:

2. Բնակչության ազդարարումն իրականացվում է՝

ա) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից.

բ) հակառակորդի հարձակման հետևանքով, որպես երկրորդային խոցման օջախ, հավանական վտանգավոր, հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներում արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ կազմակեր-պության ղեկավարի կողմից, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության միջոցով.

<Օդային տագնապ> ազդանշանի դեպքում անհապաղ իրականացվում է հետևյալ միջոցառումները՝

ա) լրիվ կամ մասնակի լուսաքողարկում, մշտական էլեկտրասնուցման անհրաժեշտություն ունեցող կազմակերպությունների էլեկտրամատակարարման ապահովմամբ:

բ) բնակչության պատսպարում կցագրված (կամ մոտակա) պաշտպանական կառույցներում.

գ) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի պահեստային կառավարման կետեր տեղափոխումը:

դ) հնարավորության դեպքում իրականացվում են անհատական պաշտպանության միջոցների, ռադիացիոն և քիմիական հետախուզության սարքերի տեղափոխում պաշտպանական կառույցներ:

ե) կազմակերպություններում արտադրությունների անվթար կանգնեցումը կատարվում է համաձայն նախապես մշակված գրաֆիկի:

զ) անընդհատ տեխնոլոգիական պրոցեսներ ունեցող կազմակերպությունները, որտեղ անհնարին է արտադրական պրոցեսի անվթար կանգնեցումը, աշխատող հերթափոխի աշխատակիցների պատսպարման նպատակով՝ պետք է ստեղծված լինեն առանձին թաքստոցներ անմիջապես աշխատատեղերի մոտ:

4.2. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ «ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻ ԱՎԱՐՏ ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

1. <Օդային տագնապի> ավարտ ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ՝ միացվում են էլեկտրաշչակները և տրվում է անընդհատ երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան:

2. <Օդային տագնապի> ավարտ ազդանշանի դեպքում իրականացվում է հետևյալ միջոցառումները՝

ա) ստուգվում և վերականգնվում է կառավարման, կապի և ազդարարման համակարգերը.

բ) իրականացվում է հետախուզություն՝ հիմնական ուշադրություն դարձնելով առավել մարդաշատ, ինչպես նաև պաշտպանական կառույցների և բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների տեղակայման վայրերին.

գ) ճշգրտվում և պատրաստականության են բերվում պահպանված քաղաքացիական պաշտպանության կազմավորումները.

դ) հետախուզական տվյալների հիման վրա վերադաս շտաբ են հաղորդվում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների տեղամասերն ու ծավալները:

ե) կազմակերպվում և անցկացվում է տուժածների բժշկական օգնություն.

զ) կազմակերպվում է քանդված և վնասված պաշտպանական կառույցների վերականգնման և չբավարարող պաշտպանական կառույցների շինարարություն.

է) կազմակերպվում է դոզաչափական հսկողություն:

V. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության վարչապետը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պետը և ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության ողջ գործընթացը:

2. Քաղաքացիական պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիա-կան պաշտպանության պետի տեղակալ:

3. Հայաստանի Հանրապետության նախարարները (գերատեսչությունների ղեկավարները), մարզպետները (Երևանի քաղաքապետը), համայնքների և կազմակերպությունների ղեկավարները համապատասխանաբար հանդիսանում են նախարարությունների

(գերատեսչությունների), մարզերի (Երևան քաղաքի), համայնքների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պետեր և կառավարում են իրենց ոլորտի քաղաքացիական պաշտպանության գործընթացը:

4. Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության պետն է Հայաստանի Հանրապետության Արավիրի մարզպետը:

5. Լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարը հանդիսանում է մարզերի քաղաքացիական պաշտպանության պետի տեղակալ:

6. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կառավարումը իրականացվում է հիմնական, պահեստային կամ շարժական կառավարման կետերից:

7. Կառավարման պահեստային կետերը ստեղծվում են նախօրոք՝ խաղաղ ժամանակաշրջանում:

8. Քաղաքացիական պաշտպանության ղեկավար մարմինների կողմից պահեստային կառավարման կետերի պատրաստ վիճակի բերումը և զբաղեցումը իրականացվում է համաձայն <Լրիվ> պատրաստականության աշխատակարգի միջոցառումների ցանկի:

9. Քաղաքացիական պաշտպանության հարցերով տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքացիական պաշտպանության բնագավառում լիազորած մարմնի տարածքային ստորաբաժանումը՝ Արմավիրի մանգային փրկարարական վարչությունը:

10. Պլանը ճշգրտվում է 3 տարին մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում՝ անմիջապես:

Հավելված 1
Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի քաղաքացիական պաշտպանության վիճակի՝
01.01.2012 թ-ի դրությամբ

ՀՀ ը/կ	Բովանդակությունը՝	Չափման միավորը	Ցուցանիշը
1.	2.	3.	4.
	1. Ընդհանուր տվյալներ		
1.	Տարածքը	քառ.կմ	7.3
2.	Բնակչությունը. այդ թվում՝	հազ. մարդ	1966
	- մինչև 1 տարեկան	հազ. մարդ	36
	- 1-9 տարեկան	հազ. մարդ	221
	- 10-17 տարեկան	հազ. մարդ	213
	- 17-ից բարձր	հազ. մարդ	1497
	- աշխատունակ տարիքի	հազ. մարդ	1270
3.	Կազմակերպություններ՝ այդ թվում՝	քանակը	5
	- խառը կազմակերպություն	քանակը	-
	- կենսաապահովման	քանակը	-
	- քիմ. վտանգավոր օբյեկտներ այդ թվում՝	քանակը	-
	- աշխատողների քանակը	քանակը	-
	- վտանգավոր գոտու բնակչության քանակը	քանակը	-
	- ճառագայթային վտանգավոր օբյեկտներ այդ թվում՝	քանակը	-
	- աշխատողների քանակը	քանակը	-
	- վտանգավոր գոտու բնակչության քանակը	քանակը	-
	- առավել վտանգավոր ջրամբարներ այդ թվում՝	քանակը	Ապարան
	- ջրածածկման գոտու բնակավայրերի քանակը	քանակը	1966
	- ջրածածկամն գոտու բնակչության քանակը	քանակը	1
	- հրդեհավտանգ, պայթյունավտանգ օբյեկտներ	քանակը	-
	-կարևորագույն նշանակության օբյեկտներ	քանակը	-
4.	Առկա կառավարման պահեստային կետեր. այդ թվում՝	քանակը	-
	-ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերին համապատասխանող	քանակը	-
	2. Բնակչության պատսպարում		
5.	Ենթակա է պատսպարման ընդամենը. այդ թվում՝	պատսպարվողների քանակը	1966
	- ապաստարաններում		-
	- հակաճառագայթային թաքստոցներում	պատսպարվողների քանակը	-
	-նկուղային և խորացված տարածքներում	պատսպարվողների քանակը	1360/70%

	- պարզագույն թաքստոցների անհրաժեշտ քանակը	պատսպարվողների քանակը	-
3. Անհատական պաշտպանության միջոցներով ապահովում			
6.	Հակագազերով՝ բնակչությանը այդ թվում՝	քանակը	0/1966
	- մինչև 1.5 տարեկան	քանակը	0/45
	- 1.5 – 7 տարեկան	քանակը	0/160
	- 7 – 17 տարեկան	քանակը	0/264
	- 17-ից բարձր	քանակը	0/1497
	քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմերը	քանակը	0/29
7.	Շնչադիմակներով քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմերը	քանակը	0/29
8.	Հետախուզական և չափահսկողական սարքերով այդ թվում՝	քանակը	0/31
	- ճառագայթային	քանակը	0/1
	- քիմիական	քանակը	0/1
	- դոզաչափական հսկողություն	քանակը	0/2
9.	ՔՊ գույքի պահպանումը	քանակը	
	- կազմակերպություններում	քանակը	
	- պետպահուստի ֆոնդում	քանակը	
4. Տարահանման միջոցառումներ			
10.	Տարահանման ենթակա բնակչությունը	բնակավայրերը	1
		բնակչության քանակը	1310
	-վտանգավոր ջրածածկման տարածքներից	բնակավայրերը	1
		բնակչության քանակը	1966
	- սողանքների տարածքներից	բնակավայրերը	-
		բնակչության քանակը	-
	- Հայկական ատոմային էլեկտրակայան՝ ՀԲԸ վթարի դեպքում վտանգավոր տարածքներից	բնակավայրերը	-
		բնակչ. քանակը	-
	- քիմիական օբյեկտների հարակից վտանգավոր տարածքներից	բնակավայրերը	-
		բնակչության քանակը	-
	- զենքի տեսակների կիրառման դեպքում բնակավայրերից և տարածքներից (սահմանամերձ գոտուց)	բնակավայրերը	1
		բնակչության քանակը	1310
5. Քաղաքացիական պաշտպանության ուժեր			
11.	Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ	քանակը	6
		անձնակազմը	26
	Քաղաքացիական պաշտպանության բժշկական կազմավորումներ	քանակը	1
		անձնակազմը	3
6. Ավտոտրանսպորտ			
12.	Տրանսպորտային միջոցներ	քանակը	200
13.	Ինժեներական տեխնիկա	քանակը	13

Հավելված 3
Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի քաղաքացիական
պաշտպանության պլանի

ՍԽԵՄԱ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ համայնքի ՔՊ ղեկավար կազմի կառավարման, կապի և ազդարարման



Հավելված 4

Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Կապի միջոցների տեսակը	Անհրաժեշտ քանակ (հատ)	Առկա քանակ (հատ)	Պակաս քանակ (հատ)	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Բջջային	45	45	-	

Հավելված 5
Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի քաղաքացիական
պաշտպանության պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՊԱՐՄԱՆ

ՀՀ ը/կ	Բնակչության թվաքանակը	Այդ թվում						Բնակչության պատսպարվածությունը %
		Ընդամենը պատսպարվում են	Ապաստարաններ	Հակաճառագայթային թաքստոցներ	Բնակելի շենքերի և սեփական տների նկուղներ	Կազմակերպության շենքերի նկուղներ	Ստորգետնյա կայարանատեղեր, անցումներ և այլ տարածքներ	
1.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.
1	1966	1360	-	-	1360	-	-	70

Հավելված 6
Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի քաղաքացիական
պաշտպանության պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ

ՀՀ ը/կ	Տարահանվող բնակչության թվաքանակը	Տարահանման երթուղին	Ընդունող բնակավայրի անվանումը		Տրանսպորտային միջոցների քանակը	Տրանսպորտային միջոց-ների երթերի քանակը	Տարահանման երթուղու երկարությունը (կմ)	Ավտոշարասյուների քանակը Տրանսպորտային միջոցների քանակը մեկ շարասյան մեջ	Վառելիքաքսուքային նյութերի ծախսը		
			անվանումը	բնակչութ. քանակը					բենզին/գազ (լ/մ3)	յուղ (լ)	վիսկոզին (լ)
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.
1	1310	Գրիբոյեդով- Փարաքար	գ.Փարաքար	8952	66	2	19	2/33	376/940	0.37	0.37

Հավելված 7
Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի քաղաքացիական
պաշտպանության պլանի

ՀԱՇՎԱՐԿ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

ՀՀ ր/կ	Բնակչության թվաքանակը	Հակագազերի քանակը		Շնչադիմակների քանակը		Բժշկական պաշտպանության միջոցների քանակը		Նշումներ
		առկա	անհրաժեշտ	առկա	անհրաժեշտ	առկա	անհրաժեշտ	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1	1966	-	1966	-	1966	-	45	

Հավելված 8
Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի բաղաքացիական
պաշտպանության պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Կազմավորումների անվանումը	Կազմավորման ստեղծման բազան	Կազմավորումների		Տեխնիկայով և գույքով ապահովում																	
					ավտոտեխնիկա						ճանապարհաշինարարական և ամբարձիչ տեխնիկա				հատուկ տեխնիկա				բաղաքացիական պաշտպանության գույք			
			թիվը	անձնակազմի թվաքանակը	մարդատար		բեռնատար		և այլն		մղանային		և այլն		ջրատար		և այլն		անհատական պաշտպանության միջոցներ		և այլն	
					առկա է	անհրաժեշտ է	առկա է	անհրաժեշտ է	առկա է	անհրաժեշտ է	առկա է	անհրաժեշտ է	առկա է	անհրաժեշտ է	առկա է	անհրաժեշտ է	առկա է	անհրաժեշտ է	առկա է	անհրաժեշտ է	առկա է	անհրաժեշտ է
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23
1	Համալիր փրկարարական խումբ		1	9	1	-	1		-	-		3		4		1	-	-		9		9
2	Ճառագայթային և քիմիական դիտարկման կետ		1	3	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		3		5
3	Կապի ջոկ		1	3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		3		3
4	ԱՊՄ բաշխման կետ		1	5	-	-			-	-	-	-	-	-	-	-	-	-		5		5
5	Հասարակական կարգի պահպանման խմբեր		1	5	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		5		5
6	Գյուղ. կենդանիների և բույսերի պաշտպանության խումբ		1	6	-	-			-	-	-	-	-	-	-	-	-	-		6		6
7	Բժշկական օղակ		1	3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		3		3

Հավելված 9
Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի քաղաքացիական
պաշտպանության պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ

ՀՀ ը/կ	Համայնքի անվանումը	Ընդամենը			Էքսկավատոր			Մղան			Ավտո կռունկ			Ինքնաթափ			Կոմպրեսոր			Այլ տեխնիկա		
		Առկա տեխնիկան քանակը	Անհրաժեշտ. քանակը	Լրացուցիչ պահանջվում է	Առկա տեխնիկան քանակը	Անհրաժեշտ. քանակը	Լրացուցիչ պահանջվում է	Առկա տեխնիկան քանակը	Անհրաժեշտ. քանակը	Լրացուցիչ պահանջվում է	Առկա տեխնիկան քանակը	Անհրաժեշտ. քանակը	Լրացուցիչ պահանջվում է	Առկա տեխնիկան քանակը	Անհրաժեշտ. քանակը	Լրացուցիչ պահանջվում է	Առկա տեխնիկան քանակը	Անհրաժեշտ. քանակը	Լրացուցիչ պահանջվում է	Առկա տեխնիկան քանակը	Անհրաժեշտ. քանակը	Լրացուցիչ պահանջվում է
1.	պետական				-			-			-						-					
2.	մասնավոր	11	8	4	-	1	1	-	1	1	-	1	1	5	2	-	-	1	1	6	2	-
Ընդամենը		11	8	4	-	1	1	-	1	1	-	1	1	5	2	-	-	1	1	6	2	-

Հավելված 10

Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

ՊԼԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ներկայացվում է քարտեզով, որին կցվում է բացատրագիր:

1. Գյուղապետարան
2. Մանկապարտեզ և բուժ. Ամբուլատորիա
3. Դպրոց

Հավելված 11

Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

ՊԼԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ
ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ներկայացվում է քարտեզով, որին կցվում է բացատրագիր:

1. Գյուղապետարան
2. Մանկապարտեզ և բուժ. Ամբուլատորիա
3. Դպրոց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 1 » նոյեմբերի 2013թ N 21-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-ի կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի բնակիչ Ռուբեն Գևորգյանի դիմումը՝ Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղում Պարոնյան 1 հասցեում գտնվող 0.0796 հա հողամասը և տունը օրինականացնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղական համայնքի Պարոնյան 1 հասցեում գտնվող 1991թվականին կառուցված բնակելի տունը և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը՝ 796 քառակուսի մետր համարել 1963 թվականի ծնված քաղաքացի Ռուբեն Գևորգյանի, որպես սեփական գույքի տիրապետողի, սեփականություն:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմունքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի նոյեմբերի 1
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » նոյեմբերի 2013թ N 22 - Ա

ՆՈՒՆԵ ՎԱՐԴԱՆԻ ԲԱԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ,36-րդ հոդվածներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N164-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գրիբոյեդովի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 2 որոշումը, Հայկ Դավթի Մուրադյանի 2013 թվականի նոյեմբերի 6-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Համայնքի բնակիչ Նունե Վարդանի Բալյանի /ծնվ. 1995թ./ նկատմամբ սահմանել հոգաբարձություն՝ հոգաբարձու նշանակելով նրա հարազատ մորեղբորը՝ Հայկ Դավթի Մուրադյանին:

2.Հսկողություն սահմանել Նունե Բալյանի նկատմամբ նշանակված հոգաբարձու Հայկ Մուրադյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի նոյեմբերի 14
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » նոյեմբերի 2013թ N 23-Ա

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի երկրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության « Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 2013 թվականի հոկտեմբերի 30-ի N748 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմենուհի Վոլոդյայի Մխիթարյանին ազատել Մարինե Հակոբյանի նկատմամբ խնամակալի պարտականությունների կատարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի նոյեմբերի 15
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 1 » նոյեմբերի 2013թ N 24 - Ա

ԱՆԱՀԻՏ ՔԵՇԻՇ -ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով,167-րդ հոդվածի 3-րդ մասով,169-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Անահիտ Քեշիշ- Ղուկասյանի համաձայնությունը

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Քեշիշ-Ղուկասյանին հետ կանչել 2013 թվականի ամենամյա արձակուրդից՝ չօգտագործված արձակուրդի 10 օրը տեղափոխել և միացնել հաջորդ տարվա արձակուրդին:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի նոյեմբերի 1
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 1 » նոյեմբերի 2013թ N 25 - Ա

ՀԵՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի 2-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Գրիբոյեդովի Բուժ.ամբուլատորիա ՊՓԲԸ տնօրեն Հերմինե Պետրոսյանի 2013 թվականի հոկտեմբերի 27-ի դիմումը

կարգադրում եմ՝

1. 2013 թվականի նոյեմբերի 1-ից Գրիբոյեդով գյուղական համայնքի Բուժ. ամբուլատորիայի տնօրեն Հերմինե Պետրոսյանին տրամադրել 2013 ամենամյա արձակուրդից՝10 / 8 նվազագույն, 2 լրացուցիչ / օր:

2. Հերմինե Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2013 թվականի նոյեմբերի 15-ից:

3. Տնօրենի պարտականությունները ժամանակավորապես վերապահել Խորոնքի ԲԱ-ի տնօրեն Մարինա Ջիվանյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի նոյեմբերի 1
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«1» նոյեմբերի 2013թ N 26 - Ա

ԶՈՀՎԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՐՑԵՐԱՎ ԶԲԱՂՎՈՂ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N11-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին / Ս. Գևորգյան / ՝սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Հանձնաժողովին / Ս. Գևորգյան / սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ավագանու անդամ Աշոտ Արզումանյանին /համաձայնությամբ/:

4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2007 թվականի մայիսի 7-ի N11 կարգադրությունը:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի նոյեմբերի 1
գ. Գրիբոյեդով

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիգորյանի
գյուղական համայնքի ղեկավարի
2013 թվականի նոյեմբերի 1-ի
N 26-Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Գևորգյան — համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

Ս. Գրիգորյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Հ. Պետրոսյան — Գրիբոյեդովի «Բուժ. Ամբուլատորիա» ՓԲԸ-ի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 19 » նոյեմբերի 2013թ N 27 - Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի երրորդ մասով,Գրիբոյեդով գյուղական համայնքի գյուղապետարանի և նրան ենթակա կառույցների ապրանքանյութական արժեքների գույքագրման նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի.

2.Հանձնաժողովին / Ս. Գևորգյան / ՝սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Հանձնաժողովին / Ս. Գևորգյան / սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Գրիբոյեդովի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաշվապահ Լիանա Սարգսյանին /համաձայնությամբ/:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի նոյեմբերի 19
գ. Գրիբոյեդով

42

Հավելված
Գեղարքունիքի մարզի Գրիգորյանովի
գյուղական համայնքի ղեկավարի
2020 թվականի նոյեմբերի 19-ի
N 27-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Գևորգյան	համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

Թ. Գրիգորյան	աշխատակազմի առաջատար մասնագետ
Դ. Ճուշանյան	աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
Ն. Գրիգորյան	«Գրիբոյեդովի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի փոխարինող